ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱոՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը «լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է հինգ տարի ժամկետով:» բառերից հետո լրացնել «Դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաները տրվում են հինգ տարի ժամկետով:» նախադասությունը:

Հոդված 2. **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների տրամադրման օրվանից անցել է հինգ տարի և ավել ժամանակահատված, ենթակա են նորից լիցենզավորման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հետևյալ ժամկետներում՝ Երևան քաղաքում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երեսուն ամսվա ընթացքում, Երևան քաղաքում բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ մեկ տարվա ընթացքում, Երևան քաղաքում բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ տասնութ ամսվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման

համար լիցենզավորված անձինք՝ երեսուն ամսվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ երկու տարվա ընթացքում, մարզերում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ քառասուներկու ամսվա ընթացքում դիմում են ներկայացնում լիազոր մարմին: Այն լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների տրամադրման օրվանից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը անցել է հինգ տարուց պակաս ժամանակահատված, հինգ տարին լրանալու դեպքում ենթակա են նորից լիցենզավորման ընդհանուր հիմունքներով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում և ժամկետներում համապատասխան լիցենզավորված անձանց կողմից նորից լիցենզավորման համար չդիմելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը:

#

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱոՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը «լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է հինգ տարի ժամկետով:» բառերից հետո լրացնել «Դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման~~, դեղերի մեծածախ իրացման գործունեություն~~ իրականացնելու~~ման~~ համար լիցենզիաները տրվում են հինգ տարի ժամկետով:» նախադասությունը:

Հոդված 2. **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից ~~վեց ամիս~~ մեկ տարի հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ~~դեղերի մեծածախ իրացման,~~ դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների տրամադրման ~~պահից~~ օրվանից անցել է հինգ տարի և ավել ժամանակահատված, ~~լիցենզիաների գործողությունը երկարաձգելու համար~~ ենթակա են նորից լիցենզավորման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հետևյալ ժամկետներում՝ ~~դեղերի մեծածախ իրացման,~~ Երևան քաղաքում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ ~~երկու տարվա~~ երեսուն ամսվա ընթացքում, Երևան քաղաքում բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ ~~վեց ամսվա~~ մեկ տարվա ընթացքում, Երևան քաղաքում բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար

լիցենզավորված անձինք՝ ~~մեկ տարվա~~ տասնութ ամսվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնարի, բժշկական կազմակերպությունից դուրս պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ ~~երկու տարվա~~ երեսուն ամսվա ընթացքում, մարզերում բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային պայմաններում գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ ~~տասնութ ամսվա~~ երկու տարվա ընթացքում, մարզերում դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք՝ ~~երեք տարվա~~ քառասուներկու ամսվա ընթացքում դիմում են ներկայացնում լիազոր մարմին: Այն լիցենզավորված անձինք, որոնց լիցենզիաների տրամադրման ~~պահից~~ օրվանից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո անցել է հինգ տարուց պակաս ժամանակահատված, հինգ տարին լրանալու դեպքում ~~լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ են ներկայացնում~~ ենթակա են նորից լիցենզավորման ընդհանուր հիմունքներով:

~~3. Սույն հոդվածով սահմանված ժամկետներում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզավորված իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից հինգ տարի առաջ իրենց տրամադրված լիցենզիաների գործողությունը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետներում չդադարեցնելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը:~~

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում և ժամկետներում համապատասխան լիցենզավորված անձանց կողմից նորից լիցենզավորման համար չդիմելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱոՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱոՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Առաջարկում եմ՝ ներկայացված «Լիցենզավորման մասին» օրենքի 26-րդ հոդվածի լրացումն իրականացնել «Դեղերի մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքների համապատասխան հոդվածներում:	Չի ընդունվել: «Լիցենզավորման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ սահմանված է լիցենզիայի տրման ժամկետ (մասնավորապես՝ «Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման կամ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են երեք տարի ժամկետով...»), այդ թվում և անժամկետ: Միաժամանակ դեղերի մեծածախ իրացում,	Չի ընդունվել:

				դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրակա-նացման համար լիցեն-զիաների գործողության ժամկետի սահմանումը դուրս է մի դեպքում «Դեղերի մասին», իսկ մյուս դեպքում «Բնակչու-թյան բժշկական օգնու-թյան և սպասարկման մասին» ՀՀ օրենքների կարգավորման առարկայից:	
2	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	15.03.2023 թվականին Նախարա-րության կողմից ներկայացված լրամշակած նախագծի 1-ին հոդվածում ավելացել է «իսկ տրամադրված լիցենզիաների ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է հինգ տարի ժամկետով» բառերը: Առաջարկում եմ՝ հանել այդ բա-ռերը, հաշվի առնելով, որ շրջա-նառության մեջ դրված նախագծում, բանավոր համաձայնության համաձայն, այդ բառերը առկա չեն եղել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3"	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-	Լրամշակված նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասից «լիցենզիայի գործողությունը երկարաձգելու համար» բառերը հանել:	Ընդունվել է: Նախագծի տրամաբանու-թյամբ «լիցենզիայի գործողությունը	Ընդունվել է:

		17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ		երկարաձգելու համար» բառերը փոխարինվել են «ենթակա են նորից լիցենզավորման՝» բառերով:	
4"	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի 1-ին հոդվածում <<դեղերի մեծածախ իրացման գործունեություն>> բառերը և 2-րդ հոդվածում <<դեղերի մեծածախ իրացման>> բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության մեջ <<պահից>> բառը փոխարինել <<օրվանից>> բառով և հետո լրացնել <<մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը>> բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	Նարեկ Զեյնալյան	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի երկրորդ հոդվածը լրացնել << **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ>> վերնագրով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	<< Կառավարություն	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Առաջարկում ենք «(այսուհետ՝ Օրենք)» բառերը հանել, քանի որ օրենքի նախագծում այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	<<	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ	Առաջարկում ենք վերանայել օրեն-	Ընդունվել է:	Ընդունվել է:

	Կառավարություն	ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱռՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	քի ուժի մեջ մտնելու համար սահմանված վեց ամիս ժամանակահատվածը և սահմանել մեկ տարի ժամանակահատված:	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «վեց ամիս» բառերը փոխարինվել են «մեկ տարի» բառերով:	
9.	ՀՀ Կառավարություն	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱռՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Վերանայել օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև օրենքն ուժի մեջ մտնելը դեղերի մեծածախ իրացման, դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզավորված անձանց, որոնց լիցենզիաների տրման պահից անցել է հինգ տարի և ավել ժամանակահատված նորից լիցենզավորվելու հայտ ներկայացնելու ժամկետները՝ սահմանել ավելի երկար ժամկետներ:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «երկու տարվա» բառերը փոխարինվել են «երեսուն ամսվա» բառերով, «վեց ամսվա» բառերը՝ «մեկ տարվա» բառերով, «մեկ տարվա» բառերը՝ «տասունթ ամսվա» բառերով, «տասնութ ամսվա» բառերը՝ «երկու տարվա» բառերով, «երեք տարվա» բառերը «քառասուներկու ամսվա» բառերով:	Ընդունվել է:
10.	ՀՀ Կառավարություն	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱռՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի տրամաբանությամբ՝ դեղատնային գործունեության, դեղերի մեծածախ իրացման, բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա ստացած իրավաբանական անձանց լիցենզիաների գործողությունը դադարեցվում է ոչ թե այդ լիցենզիաների գործողությունը նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում դադարեցնելու համար իրենց կողմից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			դիմում չներկայացնելու, այլ նորից լիցենզավորման համար չդիմելու դեպքում, ուստի առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ են ներկայացնում» բառերը փոխարինել «ենթակա են նորից լիցենզավորման» բառերով:		
11.	ՀՀ Կառավարություն	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-493-17.01.2023,17.03.2023-ԱռՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում և ժամկետներում համապատասխան լիցենզավորված անձանց կողմից նորից լիցենզավորման համար չդիմելու դեպքում լիազոր մարմինը դադարեցնում է այդ լիցենզիաների գործողությունը:»	Ընդունվել է:	Ընդունվել է: